

Պայմանագիրը շնորհելու վերաբերյալ տեղեկատվություն ճանապարհների տեխնիկա-տնտեսական հիմնավորման և նախագծման

Ծրագրի անվանումը՝ Հագարամյակի Մարտահրավեր Հիմնադրամ Հայաստան Ծրագիր:

Պայմանագրի նկարագրությունը՝ Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրով ճանապարհների տեխնիկա-տնտեսական հիմնավորում և նախագծում:

Մրցույթը հաղթած խորհրդատուն՝ Սվեկո Ինթերնեյշնալ ընկերություն (SWECO International AB):

Պայմանագրի գինը՝ 2,019,430 ԱՄՆ դոլար:

Պայմանագրի առարկան՝

Առաջադրված խնդիրը ներառում է տեխնիկատնտեսական հիմնավորում (շրջակա միջավայրի և սոցիալական գնահատման ընդգրկման համար), և վերջնական նախագծային գծագրեր և մասնագրեր՝ ծրագրի մեջ ընդգրկված 3 փուլերի համար: Այն կներառի հետազոտումներ և ճանապարհային բարելավումների տնտեսական վերլուծության համար անհրաժեշտ տվյալների հավաքագրում, ճանապարհային հատվածների վերականգնման համար տնտեսական առաջնահերթություն, շինարարական աշխատանքների նախագիծ, շրջակա միջավայրի և սոցիալական բազային տվյալների հավաքագրում, գյուղական ճանապարհների բնապահպանական հարցաթերթիկի լրացում, շրջակա միջավայրի վրա թողած ազդեցության գնահատում (EIAs), կամ անհրաժեշտության դեպքում բնապահպանական վերլուծություն, շրջակա միջավայրի կառավարման պլանների (EMPs) մշակում, բնակավայրերի տեղափոխման հնարավոր պլանների (RAPs) մշակում, EIA և EMP փաստաթղթերի հանձնումը՝ Պետական բնապահպանական փորձաքննության եզրահանգմանը և դրան հաջորդող հաստատմանը, և նախահաշվային փաստաթղթերի պատրաստումը շրջակա միջավայրի աղտոտման նվազեցման պահանջներին համաձայն: Ծառայությունները պետք է նաև ներառեն մանրամասն նախագծում և նախագծային գծագրերի և մասնագրերի պատրաստում:

Տևողությունը՝ Պայմանագրի ստորագրման պահից երեք օրացուցային տարի:

Պայմանագրի ստորագրման օրը՝ 5 դեկտեմբերի 2006թ.

Խորհրդատուի/Ընկերության անվանումը և հասցեն	Տեխնիկական միավորը	Ֆինանսական միավորը	Վերջնական գնահատված գինը	Վերջնական զբաղեցրած տեղը
Սվեկո Ինթերնեյշնալ ընկերություն Սվի Ռոդ ընկերության հետ համատեղ “Sweco International AB”(Sweden) in association with “SweRoad” (Sweden)	70.9	20	2 019 430 ԱՄՆ դոլար	1
Ֆիննռոդ ընկերությունը ԶՕՔՍ Ինջինիիրս և Արոսա ընկերությունների հետ համատեղ “Finnroad” (Finland) in association with “KOCKS Engineers” (Germany), “Arosa Ltd.”(Armenia)	71.72	17.56	2 299 046 ԱՄՆ դոլար	2
Պաբլ յու Վայ Ջի Ինթերնեյշնալ Լիմիթեդ ընկերությունը Ռոգտոն Ինթերնեյշնալ Լիմիթեդ ընկերության հետ համատեղ “WYG International Limited” (UK) in association with “Roughton International Limited” (UK)	78.21	Չի կիրառվում*	Չի կիրառվում*	Չի կիրառվում*
Վիլբուր Սմիթ Ասոցիեյթ ընկերությունը ՌՕՇԵ Ինթերնեյշնալ ՍՊԸ և Էլ Ջի Սի Գրուպ Լիմիթեդ ընկերությունների հետ համատեղ “Wilbur Smith Associates” (USA) in association with “ROCHE International Ltd.” (Canada) and “LJC Group Limited” (USA)	77.59	Չի կիրառվում*	Չի կիրառվում*	Չի կիրառվում*

* Տեխնիկական միավորը կազմել է անհրաժեշտ 80 միավոր շեմից ցածր և այսպիսով ֆինանսական առաջարկը չի բացվել